

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է քարքառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Բ. Պատկերը Նարեկացու Ստեղծագործութեան մէջ

Պատկերը գեղարուեստական մտածողութեան հիմնական տարրն է, հասկացութիւնը՝ գիտութեան: Գիտնականն ապացուցում է, արուեստագէտը ցոյց է տալիս եւ, ինչպէս ասում է Բելինսկին, «Երկունսն էլ համոզում են, միայն թէ մէկը տրամաբանական փաստարկներով, իսկ միւսը՝ պատկերներով»(1):

Բանաստեղծն աշխարհն ընկալում է սեփական մօտեցմամբ: Նրա համար կայ առարկայի կամ երեւոյթի անհատական զգացողութիւնը: Պատկերը կամրջում է միտքը զգայելի առարկայի հետ: Նա մարմնաւորում է թէ՛ անհատականը եւ թէ՛ տիպականը կերպարի, հոգեվիճակի, բնականարի եւ ուրիշ այլ մասնաւոր ձեւերի մէջ: Պատկերի մէջ արտայայտւում է նաեւ հեղինակի՝ իրականութեան գնահատութիւնը ու գեղագիտական իդեալը: Ուստի գեղարուեստական պատկերը ոչ միայն բարդ երեւոյթ է, այլեւ այն փոփոխւում է պատմականօրէն, եւ ամէն դարաշրջան ստեղծում է իր իւրայատուկ պատկերային համակարգը: Եւ դա այն պատճառով, որ մի կողմից փոխւում է գրականութեան առարկան՝ մարդը, միւս կողմից՝ իրականութեան ընկալման եւ արտացոլման եղանակները, երրորդ կողմից՝ ժամանակի

իդեալները եւ գրողի գեղագիտական հայեցակէտը: Ահա թէ ինչու չափազանց լայն է գեղարուեստական պատկերի ընդգրկման շրջագիծը: Պատկեր է թէ՛ գրական կերպարը եւ թէ՛ հոգեկան ապրումը, թէ՛ առանձին բնականարն ու գրական երկն ինքնին:

Նարեկացու պատկերային համակարգը հիմնուած է միջնադարի գեղարուեստական մտածողութեան սկզբունքների վրայ: Քնարական հերոսի կերտման նրա ելակէտը ներդաշն է միջնադարի կրօնամիստիկական աշխարհայեացքին: Նարեկացու գեղարուեստական պատկերը ծնւում է իրականութեան անմիջական զգացողութիւնից, վերաճում մարդկային ներաշխարհի քացայայտման եւ աւարտում աստուածայինի եւ իդեալականի նպատակամէտ իմաստաւորութեամբ: Տրոհելի մասերը պատկերի կառուցուածքում նոյնպիսի ամբողջութիւն են կազմում, ինչպիսի ամբողջութիւն կազմում է պատկերը երկի ընդհանուր հիւստեւածքում: Թւում է ներքին կամ չկայ նրանց միջեւ: Մինչդեռ պատկերները շաղկապուած են միմեանց մտքերի, զգացմունքների, հոգեվիճակների միասնութեամբ: Այդ

միասնութիւնն արտայայտում է ինչպէս բովանդակութեան, իդեալի եւ գեղագիտական հայեցակէտի, այնպէս էլ լեզուի, ոնի եւ ոգու միջեւ: Մատեանի համար քննորոշ է քնարական մեծախօսութիւնը: Ծանրութեան կենտրոնն ընկնում է քնարական հերոսի ներաշխարհի քացայայտման վրայ: Տեսանելի շերտը ներկայացնում է իրականութիւնը: Գաղափարական միտումաժը հասկանալու համար պէտք է թափանցել պատկերի էութեան մէջ՝ աստուածայինի, անդրանցականի փոխադարձ կապի յարաբերութեամբ: Լուսաբանելու համար անդրադառնալով նաւարկութեան սփանչելի պատկերին: Մինչ քանաստեղծը աներկմիտ վստահութեամբ մօտենում է ափին, կարծես թէ արդէն նաւահանգիստ հասած լինէր, ինչպէս ամռանը քաբեր հողմով ձմեռը շաշի՝ պայթում է փոթորիկը, եւ նաւը խորտակում է ահեղ ալեկոծութիւնից: Կայմը պոկում է տեղից, թիւերը փշրում են, առագաստը պատառոտում է ծուէն-ծուէն, խզում են առասանները, պարանները՝ կտրում, քանդում է խարսխակալ նոպանը, ծոծում են նաւավարութեան սամինները, յատակի լաստը սուզում է ջրում, տապալում է դիտարանը, դեկասար-քերը դադարում են գործելուց, իրարից զատում են շարժիչ մասերը, - եւ դեռ՝

*Ողնափայտին պատսպարան խսկոյն
քեկաւ,*

*Կապարանք գտնին հաստուածոյ
յօշատեցաւ,*

*Գոգք ամփոփման ծոցոյն կազմա-
ծոյ անարգեցան,*

*Խելք շրթանցն եզերաց խախտեալ
ոստեաւ,*

*Պաղպաղունք քազմականացն
անկեալ քարծաւ,*

*Վանդակապատին վայելչութիւն
յատակեցաւ,*

*Գահաւորակին հանգստարանն
շփոթեցաւ,*

*Մածմունք տախտակաշարք ի
միաբանութեանց միմեանց անշատեցան,
Հեղոյսք պնդման քեւեռացն
հարշեցան:*

(Բան ԻԵ, ք)

Մատեանի ընդհանուր հիւսուածքից դուրս սա կարող է դիտուել որպէս նաւարկութեան հոյակապ նկարագրութիւն՝ մանրամասնութիւնների մէջ ճշգրիտ, ներգործման տեսակետից՝ ցնցող: Իսկապէս, ինչպէս գրել է Մ. Մկրեանը «Եթէ մէկը փորձէր յատկապէս նաւարկութեան մի տեսարան նկարագրել, միեւնոյն է, սրանից աւելին չէր կարող ասել: Նարեկացին ինքը ամէն ինչ տեսնում է իրրեւ պատկեր եւ այդպէս էլ տեսնում է ընթերցողին» (2): Բայց այս նկարագրութիւնը բոլորովին այլ արժէք կ'ունենար իրրեւ ինքնուրոյն քանաստեղծութիւն եւ միանգամայն այլ իմաստ եւ նշանակութիւն ունի իրրեւ Նարեկացու պատկերային համակարգի քաղաքիչ տարր: Առաջին դէպքում դա կը լինէր գուտ աշխարհիկ քանաստեղծութիւն, նոր մտածողութեան արգասիք, մինչդեռ իրականում Նարեկացու համար դա միայն միջոց է քնարական հերոսի հոգու ողորդութիւնը տեսանելի դարձնելու համար: Խորտակուած նաւը խորհրդանշում է քանաստեղծի մեղքերից խորտակուած հոգին. «Արգասիք իրին յիշատակարան ողորդ ինձ նմանեցաւ» (Բան ԻԵ, ք): Նաւ-հոգի պատկերը հարագատ է Նարեկացուն: Մի այլ անգամ նա պաղատում է Աստծուն՝ «Մի՛ նաւ հոգւոյս՝ ալեկոծեալ, Մի՛ երկարութիւն յուսոյն՝ կտրեցեալ» (Բան ԶԷ, գ): Պատկերից ակնհայտ է քնարական հերոսի հոգեվիճակի եւ նաւարկութեան կապը: Ակնհայտ է, սակայն, թէ այդ երկուսն ինչ կապ ունեն քանաստեղծի մտադրացման եւ իդեալի հետ: Պարզելու համար այդ կապը հարկաւոր է պատկերին նայել թէ՛ այն նախադրեալի տեսանկիւնից, որ նախապատրաստել է պատկերի ծնունդը եւ թէ՛ աւարտի այն

վախճանակէտից, որն իմաստաւորում է պատկերը: Նարեկացու համար էականը նաւարեկութեան նկարագրութիւնը չէ, եւ նաւն էլ այլ բան չէ, քան հոգու խորհրդանիշ: Սա նախապատրաստուած է նաւարեկութիւնից առաջ: Կեանքը Նարեկացուն պատկերանում է իբրեւ ծով, որի ալեկոծութիւնից տագնապած տատանում է բանաստեղծի հոգին՝ մարմնի մակոյկում: Մշտածուի այդ տարերքը յղի է ամենաանակնկալ վտանգներով: Եւ ահա վտանգը հասնում է հենց այն պահին, երբ ինքն ամենից քիչ է երկիւղել, ամենից քիչ է զգօն եղել, երբ առաւել անհոգ եւ «անտարակոյս վստահութեամբ» կարծես արդէն հասած է եղել նաւահանգիստ: Ծովը ծառս է լինում, եւ նաւը խորտակում է մաս առ մաս, տախտակ առ տախտակ: Նաւի վերջին բեկորները խեղդուող բանականների նման հեծեծում են պղտոր ալիքների վրայ, տարաբախտ նաւավարի աչքի առաջ, որը ձեռքը ծնօտին դեգերում է ծովափին եւ ողբում սրտաբեկ: Թւում է՝ պատկերն ամբողջացաւ, եւ իրական աղէտի գուգահեռմամբ Նարեկացին գծեց իր հերոսի ողբերգութեան սարսռագող տեսարանը: Բայց այստեղ ամէն ինչ կատարուեց իրական ժամանակի ու տարածութեան մէջ: Սա քիչ է Նարեկացու համար: Խորտակման փոխարէն կայ նորոգման յոյսը, նաւավարի փոխարէն՝ երկնային նաւապետը՝ Աստուած: Նա տեսնում է ամէն ինչ եւ ցաւում է մարդկային հոգու կորստի համար: Սա է ողբերգութեան կիզակէտը: Մարդու եւ Աստծու այս դիմակայութիւնն է, որ անցնում է պատկերից պատկեր: Այստեղ է, որ յուգական լարուածութիւնը հասնում է իր քարձակէտին:

Իցէ՞ արդեօք տեսանել գփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ,

Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ:

(Բան ԻԵ, գ)

Շարունակութիւնը նոյն հոգեւորամադրութիւնն է՝ ծաւալուած նոր փոխաբերութիւններով: Այդ փոխաբերութիւնները առանձին-առանձին թէեւ համագոր, բայց թւում են ջոկ-ջոկ վառուող մոմերի նման, մինչդեռ ամբողջութեան մէջ, պատկերի հիւստածում, ճառագում են քաղամտմ ջահի ուժով: Հարցերի շարքը մնում է անպատասխան եւ, այնուհանդերձ, բանաստեղծն անյոյս չէ, նա սպասում է տագնապի փարատմանը: Նա լիալոյս է, որ Քրիստոսը գթասիրաբար պիտի փրկի իրեն՝ ընծայելով կեանք եւ երանութիւն, որ ինքը պէտք է լսի նրա ողջոյնի ձայնը. «Հատուածեալն ձայն ողջունի բոյ, տէր, լուիցի» (Բան ԻԵ, դ):

Այսպիսով, նաւարեկութեան պատկերն իր տրոհելի մասերով իմաստաւորում է Մատեանի բնարական հերոսի հոգեվիճակը, ընթացք տալիս գործողութեանը, զարգացնում սիւժէն, առարկան օժտում է խորհրդանշական իմաստով, ընդլայնում է հեղինակի գեղարուեստական ընկալման տեսադաշտը եւ ցայտուն է դարձնում նրա իդեալի նշանակութիւնը:

Լեզուի պատկերաւորութեան միջոցները ծառայում են գեղարուեստական պատկերի ստեղծմանը, ուստի նրանք չեն նոյնանում իրար հետ: Ինչպէս շրջանագծի երկարութեան յարաբերութիւնը տրամագծին միշտ էլ նոյնն է, այնպէս էլ Նարեկացու պատկերների յարաբերութիւնը նոյնն է Մատեանի գաղափարական բովանդակութեան եւ բանաստեղծի իդեալի հետ:

Գեղարուեստական այդ պատկերները՝ լինի քառ-պատկեր, ծաւալուն համեմատութիւն, քնանկար, հոգեվիճակ թէ պատկեր-մեծախօսութիւն, - բոլորն էլ ներկայացնում են Մատեանի գեղագիտօրէն կազմակերպուած ռեալիստիկ շարժում տարրեր: Սա էլ բնութագրում է Մատեանի պատկերային հենքի եւ նրա

կառուցուածքի առանձնայատկութիւնը: Չնայած Մատեանի վսեմ ոգին, պատկերների կուտակմանը, պարբերոյթների զուտ Նարեկացիական բազմանդամ կառոյցների, այդ երկը պատկերների կառուցման պարզութեան շնորհիւ մատչելի է եղել անգամ անգրագէտ, հասարակ ունկնդիրներին: Սրա մէջ է նաեւ Մատեանի լայն ժողովրդայնութիւնը:

Նարեկացին պատկերը հիմնականում կառուցում է այսպէս. ա) սրտի խորքերից յղուած մաղթամբ առ Աստուած, բ) մեղքերի խոստովանութիւն, գ) հոգեկան վիճակի առարկայական գուգահեռ եւ նմանութիւն, դ) մարդկայինի եւ աստուածայինի հակադրութիւն, ե) ներման արժանանալու յոյս եւ փրկութեան խնդրանք: Բայց եթէ պատկերի ձեւը մատչելի է բոլորին, ընկալելի է իբրեւ աղօթք, ապա բովանդակութիւնը մի տեսակ մնում է խոր եւ անսպառելի: Նարեկացին չի տալիս մարդկային ֆակտագրի պատմութիւն: Նա տալիս է ֆնարական հերոսի հոգու դրաման, նրա համամարդկային ողբերգութիւնը: Նրա մեղքը մարդու մեղքն է առհասարակ: Նարեկացու պատկերած քնանկարը որոշակի աշխարհագրական վայրի նկարագրութիւն չէ, այլ քնանկար է վերացարկուած ուրուագծերի մէջ: Առանձին դէպքերում միայն նա շոշափում է իր անձին առնչուող աղօտ ակնարկներ, որոնք ծառայում են գեղարուեստական ճշմարտացիութեան նպատակին: Անհատական սկիզբը Նարեկացու մօտ ունի վերանձնական քնոյթ:

Նարեկացու գեղարուեստական պատկերների մէջ նշանակութիւն չունի քննապատկերն է համեմատուում հոգեվիճակի, թէ՞ հոգեվիճակը քնութեան երեւոյթի հետ: Համեմատելիների տեղափոխութիւնից իմաստը չի փոխուում: Բայց ինչպէս ասուեց, դա միայն ելակէտ է աստուածայինի յարաբերութեամբ:

Այսպէս, օրինակ, շնչահեղձելու աստիճան Նարեկացին թուարկում է իր մեղքերը, չարամիտ դիտաւորութիւնների, յանցանքների, մտադրուած, բայց չիրագործուած արարքների մի երկար շարք, եւ այդ բոլորը տեսանելի դարձնելու համար դիմում է կարիքների նմանութեանը.

*Այլ զոր աւրինակ անթիւ
բազմութիւն կայտառաց կարճաց
խայթողականաց՝*

*Ի ստորին մասունս ծայրից տունոցն
զաւրհասական թոյնս բերելոց,*

*Եւ յաման մաշկեղէն արկեալ
ամփոփէ*

*Զելիցն շաւիղ կապարանին
շրջափակութեամբ,*

*Ցուցանի արտափուտ բարիոք, իսկ
ի ներփուտ՝ համբարք չարի*

*Եւ պահեստ կորստեան եւ կոյտ
կսկծման*

*Եւ գործանեայք սատակման եւ
մշակք մահու:*

*Արդ, այսոքիկ են ամբարեալքն քո
անաւրէնութեան*

*Տաժանեաց թշուառափրտն
թռչակք,*

*Անձն իմ պարտական կրկին
սատակման:*

(Բան ԽԵ, գ,)

Ինչպիսի ճշգրտութիւն էլ ունենայ կարիքների այս նկարագրութիւնը, Նարեկացու հետաքրքրութիւնը պայմանաւորուած է գեղարուեստական պատկերի մղումով: Բնութեան ֆանաչողութիւնը նպաստում է պատկերի թանձրացմանը: Բանաստեղծի նպատակը զուտ ֆանաչողութեան խնդիրը չէ: Նարեկացու համար կարիքը համեմատութեան եզր է սոսկ, զուգահեռ եւ ոչ թէ ուսումնասիրութեան առարկայ: Այս մակարդակից նա անցնում է ֆնարական հերոսի եւ Աստծու միջեւ քացուած երկխօսութեանը.

*Արդ, ես ինձէն զիս ինքն պարտ
վարկայ կրկին հատուցման,*

*Կորստեան, սատակման, ի մահ
դատապարտութեան...*

(Բան ԽԵ, գ)

Բայց այստեղ էլ Նարեկացին չի
կարող խօսքն աւարտած համարել, քանի
որ թէւ մահուան արժանի, նա հաւատում
է Աստուծո գթասրտութեանը եւ ակնկալում
է փրկութիւն՝

*Այլ խնայեա՛ յիս ողորմութեամբ,
բարեգութ, կենդանի,*

*Հգաւր, կամարար, կարող,
հնարաւոր, աւրինեա՛լ յաւիտեանս:*

(Բան ԽԵ, գ)

Մի օրինակ եւս: Խօսելով արդարեւրի,
խոնարհների եւ սրբերի մասին, որոնք
աստուածային երանութեան են արժանացել,
Նարեկացին դատապարտում է իրեն իբրեւ
մեղապարտի, տագնապում է, որ ինքը չի
կարող դասուել նրանց կարգը, գտնուել
նրանց զնդում. «Ապա յորո՞ւմ գնդի ես
գտեցայց Գերեալս ի գաղտնեաց գտողին
չարեաց»: Հոգու այս տագնապն ու
տուայտանքը Նարեկացին պատկերել է
այսպէս.

*Քանզի զոր աւրինակ տատանին
տագնապաւ տերեւ տնկոց եղելին
ծառոց,*

*Շարժեալք ի հողմոց ուժգին
բախելոց՝ հոսեալք ի խոնարհ,*

*Այնպէս ջանացաւ ջարդել
զընթացից իմոց վերարձակութիւն*

*Քաջաբեր ուղէշս՝ գյարմարեալս
ձեռամբ անեղ մշակիդ:*

(Բան ԿԱ, գ)

Ակներեւ է, որ պատկերն այս
մակարդակում չի աւարտուել: Աւարտուած
է համեմատութիւնը՝ իբրեւ մտքի
արտայայտութիւն: Բայց կայ աստուա-
ծայինը, փրկութեան յոյսի ակնկալութիւնը,
եւ բանաստեղծը պատկերն աւարտում է
վերին այդ մակարդակում.

*Զոր հաստատեցես՝
արմատացուցեալ վերստին դարձեալ*

*Նոր պտղաւորութեամբ
անապականաւ*

*Յանդաստան կենաց խնամոց Բոց
կամացդ,*

*Ամենապարգեւ քաջաւոր
Քրիստոս, աւրինեալ յաւիտեանս:*

(Բան ԿԱ, գ)

(Շարունակելի)

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԲԻԻՄՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. Պատկերը Նարեկացու Ստեղծագործութեան Մէջ

1.- Վ. Գ. Բելինսկի, փիլիսոփայական ընտիր
երկեր, հ. 2, Երեւան, 1956, էջ 468:

2.- Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, էջ 221: